# ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԻՊ ԷՋԵՐԻՑ

«Էջմիածին» ամսաթերթի 1962 թվականի Բ համարում (էջ 48) ներկայացրել էինք Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասյան արխիվում գտնվող Կոմիտաս վարդապետի անտիպ եկեղեցական մշակումների ցուցակը։ Այժմ հրատարակում ենք դրանցից երեքը՝ «Տէր ողորմեա» (ԲՁ Ա տեսակ), «Աշխարհ ամենայն» և «Էջ, Միածին» ի Հօրէ»։

Այստեղ հրատարակվող անտիպ էջերը բնագրերից լուսանկարել ենք և արտագրել՝ ներկայացնելու համար մեր երաժշտասեր հասարակության։

Գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվող բնագրերից շատերը ունեն Կոմիտաս վարդապետի ձեռքով կատարված խմբագրական ճշտումներ և լրացումներ, իսկ բնագրերից ոմանք էլ ավարտված, վերջնական մշակումներ են։

Այս վերջին խմբի բնագրերի միայն լուսանկարներն ենք հրատարակելու, որովհետև նրանք ավարտուն, հստակ և դյուրընթեռնելի են։ Իսկ այն մշակումները, որոնք խմբագրական նպատակներով հեղինակի կողմից մատիտով հավելումներ են կրում, մենք արտագրել ենք (վերականգնել), սնաթանաք սկզբնագրին հարազատ մնալու սկզբունքով։

Ստորև բերված բնագրի առաջին լուսանկարի առաջին հատվածը ԲՁ «Տէր ողորմեա»-յի տարբերակն է, քառաձայն։ Մինչ սա, մեզ ծանոթ էր Կոմիտասյան «Տէր ողորմեա»-յի եռաձայն մշակումը, որը երգվել է մեր եկեղեցիներում պատարագի ժամանակ և պահոց օրերին։ Սակայն այժմ պարզվում է, որ Կոմիտաս վարդապետը, բացի եռաձայն մշակումից, ունի քառաձայն և բազմաձայն «Տէր ողորմեա»-ի տարբերակներ։

Հաջորդ հատվածը ԺԲ դարի Հայ եկեղեցու նշանավոր հայրապետ, մատենագիր և երաժիշտ Ներսես Շնորհալու հորինած «Աշխարհ ամենայն» երգն է, որը մեր եկեղեցում երգվում է Մարտիրոսաց տոներին, առավոտյան ժամերգության ժամանակ, «Առաւօտ լուսոյ»-ի փոխարեն։

Երգը վերադաշնավորված է բաղաձայն խմբի համար, հանդիսավոր առիթներով երգելու, որպես մահերգ։ Զայնագրված է մեկ տուն։

Սրան հաջորդող լուսանկարը մեր եկեղեցում Մայր Աթոռի տոնին և Հայրապետական մաղթանքների առթիվ երգվող «Էջ Միածինն ի Հօրէ» շարականն է։ Բնագրի լուսանկարից բացի ներկայացնում ենք հարազատ արտագրությունը, դյուրընթեռնելի դարձնելու նպատակով։

Հույս ունենք, որ բոլոր այս նյութերը Կոմիտասի Երևանյան արխիվից դուրս կհանվեն և կհրատարակվեն Կոմիտասյան ժողովածուների 10 հատորներից մեկում, աստիճանաբար ամբողջացնելու համար հանճարեղ վարդապետի թողած հարուստ ժառանգության երաժշտական գանձարանը։

ՊԵՏՐՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԻՐԲԻՐՅԱՆ



ԲՁ «ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ»-ՅԻ ԵՎ «ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ»-Ի ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԻՆՔՆԱԳԻՐԸ



«ԷՋ ՄԻԱԾԻՆՆ Ի ՀՈՐԷ» ՇԱՐԱԿԱՆԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԻՆՔՆԱԳԻՐԸ

# ԷՋՄԻԱԾԻՆՆ Ի ՀՕՐԷ

Դրի առաջ ս դաշնակով՝
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

S.
A
T
B

Էջ - Մի - ա ծինն ի Հա - ռ՝ ևս լս յս փա-ռաց ընդ-ելի - մա

ձայնն հրեշ տ ցին սան - դա - ռա - մեռ ան դրն - դսոյ

Տես եալ լոյ լս յս մեծ հոյ ռա - պե - տին Գրի - գո - ռի, պատ-մէր

ցրն - ծա - լքա - մբ նա - ւա տաց եալ ար - հա - յին

Ե - կայ ի ովն - նես - ցան սուրբ լոյ - խա - ռա - ճրն լու - սոյ,

հան վ՝ ի ամա ծայ-եաց մեզ լս յս ի Հա - յաս - տան աշ - խար - հի: